

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY

ՀԵՐԱՅԻ ՏՈՒՐՅԱԿ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ  
ԵՎ ՉԱՐԳԼՕՄԱԿ ՀԵՌԱԿԱՐՄԵՐԸ  
ARMENIAN STUDIES TODAY  
AND DEVELOPMENT  
PERSPECTIVES

Միջազգային համաժողով  
Երևան, 15-20 սեպտեմբերի, 2003 թ.  
International Congress  
Yerevan, September 15-20, 2003



Ձեկուցումների ժողովածու  
Collection of papers



## ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Լիանա Հովսեփյան  
Հայաստան

Միջին հայերենի գիտական հետազոտությունը սկսվել է 19-րդ դարի երկրորդ կեսերից՝ կապված աշխարհաբարի ուսումնասիրության հետ: Մի կողմից՝ ձգտելով հաստատել աշխարհաբարի քաղաքացիական իրավունքները և ապացուցել, որ նա նոր ժամանակների ծնունդ է և իր արմատներով թաղված է դարերի խորքում, մյուս կողմից՝ ցանկանալով բացատրել ժամանակակից լեզվի քերականական ձևերի ծագումը, որոնք գրաբարի համեմատությամբ բոլորովին նոր պատկեր էին ներկայացնում, լեզվաբաններն սկսում են ուսումնասիրել հին և միջնադարյան մատենագրությունը՝ ժամանակի խոսակցական լեզվի տարրերը հայտնաբերելու միտումով: Այդպիսի խիստ մանրակրկիտ ուսումնասիրություն է արված Ա. Այտընյանի «Քննական քերականության» մեջ, որի «Նախաշավիղը» նվիրված է աշխարհաբարի սկզբնավորման, զարգացման և գրականության լեզու դառնալու հարցերին: Թեև միջին հայերենի քննությունը որպես այդպիսին դուրս էր Այտընյանի նպատակներից, սակայն նա առաջինն էր, որ նշեց ինքնուրույն միջնադարյան հայ լեզվի գոյությունը: Միջին հայերենի՝ գրաբարից և արդի աշխարհաբարից տարբերվող նոր որակի այդ գիտակցումը հատուկ է դառնում լեզվի այդ շրջանին վերաբերող հետազոտություններին: Վերջիններս միատարր չեն թե՛ իրենց բնույթով և թե՛ նպատակադրումով և կարող են բաժանվել մի քանի խմբի:

Առաջին հերթին պետք է նշել այն աշխատությունները, որտեղ տրվում է միջին հայերենի լեզվական կառուցվածքի նկարագրությունը: Դրանցից ամենահինը Յոզեֆ Կարստի «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» է, որը լույս է տեսել մեկ դար առաջ 1901 թվականին: Հաջորդ, համեմատաբար լիակատար ուսումնասիրությունն է «Միջին հայերենի պատմության ակնարկներ» հավաքական աշխատությունը երկու հատորով, որը լույս է տեսել ավելի քան յոթ տասնամյակ հետո 1972-75 թթ.: Դրանից առաջ միջին հայերենի ամբողջական նկարագրությունը տալու նպատակ է ունեցել և Ս. Ղազարյանը<sup>1</sup>, սակայն նրա աշխատությունը, ցավոք, մնացել է անավարտ: Լույս է տեսել միայն հնչյունաբանությանը նվիրված հատորը: Այս ամբողջական աշխատություններից բացի կան ուսումնասիրություններ նվիրված միջին հայերենի լեզվական կառուցվածքի առանձին հատվածներին: Առավել մեծ ուշադրության է արժանացել միջին հայերենի բառապաշարը, որին նվիրվել են ինչպես մենագրություն (Ռ. Ղազարյան «Միջին հայերենի բառապաշարի զարգացումը»), այնպես էլ թեկնածուական ատենախոսություններ (Ա. Մուշեղյան «Արաբերեն և պարսկերեն փոխառությունները միջնադարյան բժշկարաններում», Ս. Ղազարյան «Միջին հայերենի եվրոպական փոխառությունները», Լ. Ավետիսյան «Միջին հայերենի արհեստագործական տերմինաբանությունը»): Միջին հայերեն բառե-

րի ստուգաբանությամբ զբաղվել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Հ. Հյուբշմանը, Յ. Կարստը, Ն. Բյուզանդացին, Հ. Աճառյանը և ուրիշներ: Եվ վերջապես, կազմվել է միջին հայերենի երկհատոր բառարանը (Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան), որը ընդգրկում է հայ միջնադարյան գրավոր հուշարձաններում, ինչպես նաև Ն. Բյուզանդացու և Յ. Կարստի անտիպ բառարաններում անփոփոխ հարուստ նյութը<sup>2</sup>: Կան նաև միջին հայերենով գրված գրական հուշարձանների լեզվի քննությունը նվիրված աշխատություններ, որոնցից առավել կարևորներն են միջնադարյան վիճակի արձանագրությունների (Ս. Ավագյան) և ձեռագրերի հիշատակարանների (Գ. Տահուկյան, Լ. Հովսեփյան) լեզվի ուսումնասիրությունները: Ատենախոսություն է գրվում միջնադարյան բանաստեղծ Ֆրիկի լեզվի վերաբերյալ: Մի շարք աշխատություններում և հոդվածներում հետազոտողներն անդրադարձել են նաև միջնադարյան բնագրերում հանդիպող այս կամ այն լեզվական առանձնահատկությանը (Ջ. Բոլոնիեզի, Ա. Օրենզո, Ու. Բլեզինգ, Թ. Վան Լինդ և այլք): Միջնադարյան հուշարձանների ուսումնասիրության տեսական խնդիրներին անդրադարձել է Յ. Վայտենբերգը: Միջնադարյան հայ գրական հուշարձաններն ու հրատարակողները դիտողություններ են արել նաև նրանց լեզվի վերաբերյալ (Մ. Աբեդյան և ուրիշներ):

Աշխատությունների մյուս խումբը պատմական բնույթի հետազոտություններն են, որոնց հեղինակները քննության են առնում հայոց լեզվի համակարգը կամ նրա պատմական ընթացքը իր ամբողջության մեջ և ըստ այդմ լուսաբանում միջին հայերենի հետ կապված հարցերն ու ավելի կամ պակաս լայն ընդգրկմամբ ներկայացնում նրա քերականության հիմնական գծերը: Դրանք են Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը» և «Լիակատար քերականությունը», Գ. Տահուկյանի «Հայոց լեզվի զարգացման փուլերը» և «Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը», Է. Աղայանի «Որակական անցումները լեզվի մեջ» հոդվածը, Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը», Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածությունը» և այլն:

Հնարավորություն չունենալով մանրամասն ներկայացնելու և գնահատելու նշված աշխատությունները, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել այն տեսական հարցերի ու գործնական խնդիրների վրա, որոնք ուշադրության են առնվում դրանց մեջ և, առհասարակ, ծագում են միջին հայերենի ուսումնասիրության ընթացքում: Նրանցից առաջին հերթին կարևոր է «միջին հայերեն» տերմինի ճշգրտման հարցը:

Դեռևս միջին հայերենի կազմավորումից էլ առաջ ժողովրդի խոսակցական լեզվի և գրաբարի տարբերությունը գիտակցվում էր ժամանակի հասարակության կողմից և իր արտահայտությունն էր գտնում այդ երկու տարբերակներին տրվող անվանումների մեջ: Այսպես, ժամանակի մատենագրության մեջ գրաբարը անվանվում է «գրոց կամ քերթողական», «ավագանվոյ կամ ազատաց», «ուսումնական կամ գիտնոց» լեզու, իսկ ժողովրդի խոսակցական լեզուն՝ «գեղջկաց բարբառ», «գեղիկ բան», «մթին լեզու», «սովորական խոսք», «ռամկորեն», «ռամկաց խոսք», «հասարակաց բառ», «աշխարհի բառ», «աշխարհաբառ», «աշխարհաբար», «աշխարհակներում այդ անվանումներից ընդունվում է «նախնյաց ռամկորեն» տերմինը (Այտընյան, Հովնանյան), որը սակայն, չունենալով հստակություն և ժամանակագրական որոշակիություն, քանի որ դրանով կառուցվում է «նախնյաց ռամկորեն» տերմինը (Այտընյան, Հովնանյան), որը սակայն, չունենալով որպես ժողովրդական լեզուն՝ բացի դրանից, դա կարող էր թյուրիմացությունների տեղիք խոսակցական լեզուն: Բացի դրանից, դա կարող էր թյուրիմացությունների տեղիք տալ, առաջացնելով այն սխալ կարծիքը, թե գրաբարը և նախնյաց ռամկորենը հակադրվում էին որպես հասարակական երկու տարբեր խավերի՝ արքունիքի ու ավա-

գանու և ռամիկների լեզուներ: 3. Կարստի աշխատության հրատարակումից հետո հայ լեզվաբանության մեջ ընդունվում է *միջին հայերեն* տերմինը, որը նախորդի համեմատությամբ ուներ որոշակի առավելություններ: Նախ՝ այն հաշվի էր առնում հայոց լեզվի զարգացման ողջ պատմությունը և միջին դարերի լեզուն պատմականորեն կապում նախորդ (հին) և հաջորդ (նոր) շրջանների հետ որպես միջին անցման օղակ և այդպիսով բացառում հայոց լեզվի զարգացման շրջանների միջև խզում տեսնելու վտանգը: Այնուհետև, հնարավորություն էր տալիս միասնական անունով նշանակելու լեզվի այդ փուլի բոլոր արտահայտությունները գրական և խոսակցական, համաժողովրդական և բարբառային տարբերակներով հանդերձ: Սակայն այս տերմինը նույնպես հետագա ճշգրտման կարիք ուներ, քանի որ տարբեր լեզվաբաններ նրան վերագրում էին տարբեր բովանդակություն, ըստ այնմ, թե ինչպես էին լուծում միջին հայերենի բարբառային հիմքի, տարածական և ժամանակագրական սահմանների հարցերը: Այսպիսով երկրորդ կարևոր խնդիրը միջին հայերենի ժամանակագրական սահմանների որոշումն է հայոց լեզվի զարգացման ընդհանուր պարբերացման մեջ: Ուսումնասիրողները գտնում են, որ իր ակունքներով միջին հայերենը հասնում է մինչև հին հայերենյան ժամանակաշրջանը, բայց նրա լրիվ կազմավորումը կապում են գրաբարի մահացման հետ: 3. Կարստը միջին հայերենի սկիզբ է ընդունում 10-րդ դարը: Այս լեզվական վիճակը, ըստ Կարստի, շարունակվում է մինչև 15-րդ դար, որտեղից սկսվում է նոր հայերենի շրջանը: Ս. Ղազարյանը նույնպես գտնում էր, որ «այդ լեզուն իր .հիմնական առանձնահատկություններով դրսևորվել էր 10-11-րդ դարերում և ընդհանուր էր ամբողջ հայության համար»<sup>3</sup>: Այս հետազոտողները հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ գրաբարը կենդանի հաղորդակցման իր գործառույթը կորցնելուց հետո էլ դեռ շարունակում էր գործածվել գրականության մեջ, իսկ միջին հայերենը թեև արդեն կազմավորվել էր որպես խոսակցական լեզու, բայց գրականության մեջ մտավ շատ ավելի ուշ՝ 12-րդ դարի կեսերից: Այս վերջին տեսակետին են Դ. Հովհաննիսյանը և Դ. Աճառյանը, որոնք գրական և խոսակցական տարբերակների հստակ գիտակցումով են լուծում այս հարցը: Մասնավորապես, Դ. Աճառյանը նշում է, որ «Երբ խոսում ենք միջին հայերեն գրականության սկզբնավորման մասին և երևան հանում նրա հնագույն հիշատակարանը, պետք չէ բնավ հասկանալ միջին հայերեն բանավոր լեզուն, որի ծագումը շատ ավելի հին էր, քան գրավորը... ԺԲ դարի երկրորդ կեսից միջին հայերեն գրականությունը մեծ զարկ է ստանում»<sup>4</sup>: 12-րդ դարը միջին հայերենի սկզբնավորվել է համարում նաև Գ. Ջահուկյանը՝ միջին հայերենի պատմությունը բաժանելով երկու ենթաշրջանի. ա) կիլիկյան նորմավորման ենթաշրջան՝ 12-14-րդ դարերը և բ) աշխարհաբարացման ենթաշրջան՝ 15-16-րդ դարերը: Առաջին ենթաշրջանում կիլիկյան հայերենն ուներ պետական-պաշտոնական լեզվի կարգավիճակ և մշակման, նորմավորման, զարգացման ու տարածման լայն հնարավորություններ: Երկրորդ ենթաշրջանում միջին գրական հայերենը կորցնում է իր պետական լեզվի կարգավիճակը և միասնական զարգացման հեռանկարները, անկում են ապրում գրական ավանդույթները, լեզուն ենթարկվում է բարբառների խիստ ազդեցությանը: Գ. Ջահուկյանի առաջարկած հայոց լեզվի պատմության պարբերացումը, այդ թվում և միջին հայերենի ժամանակաշրջանն ու զարգացման ենթաշրջանները ներկայումս ընդհանուր ընդունելություն են գտել հայագիտության մեջ: Նույնը չի կարելի ասել միջին հայերենի հետ կապված մյուս կարևոր տեսական խնդրի՝ նրա բարբառային տարբերակվածության հարցի վերաբերյալ, որը մինչև օրս տարակարծությունների տեղիք է տալիս: Դեռևս Կարստն ինքը միջին հայերեն տերմինի հետ զուգահեռաբար որպես հոմանիշ գործածում է և կիլիկյան հայերեն անվանումը: Սրանով նա ընդունում է, որ միջին հայերենը ձևավորվել է Կիլիկիայում, տեղի խոսակցական լեզվի հիման վրա, բարձրացել է գրականության աստիճանի և որպես պետական լեզու ուժեղ կերպով ազդել է նաև

Հայաստանի այլ գավառների լեզվի վրա, այնպես որ մեզ հասած մատենագրությունը զգալի չափով միասնական է: Մյուս կողմից սակայն, Կարստը նշում է նաև բարբառային տարբերություններ և նույնիսկ փորձում է գտնել իրարից բավականին զանազանվող չորս տարբերակ՝ 1) կիլիկեցի Սմբատի լեզուն, 2) Մխիթար Հերացու լեզուն, 3) Ախրապատիցի լեզուն, 4) Բջնիի արծանագրությունների լեզուն: Այդուհանդերձ, նա գրում է. «Որքան էլ մի կողմից հաստատ լինի միջին հայերենի՝ բարբառների բաժանված լինելու իրողությունը, մյուս կողմից, այնուամենայնիվ կարող ենք խոսել միասնական գրական միջին հայերեն լեզվի մասին ... Եվ թեպետ կիլիկյան հայերենը այն ժամանակ գոյություն ունեցող միակ լեզուն չէր, բայց մեզ համար այն ամենածանոթ և ամենակարևոր միջին հայերեն լեզուն է»<sup>5</sup>: Այսպիսով, միջին հայերենի տարբերակների հարցը Կարստի կողմից փոխադրումային լուծում է ստանում, որպես տեսություն նա ընդունում է բարբառային տարբերակների գոյության փաստը, սակայն քննությունը չի տանում դրանք բացահայտելու ուղիով և կիլիկյան միջին հայերեն անվան տակ քննում է միջնադարյան մատենագրության մեջ ավանդված բոլոր լեզվական երևույթները: Դ. Աճառյանը, գտնելով, որ միջին հայերենը հին վերին գերմաներենի կամ միջին վերին գերմաներենի նման բաժանված էր բարբառների, Կիլիկիայի լեզուն համարում էր այդ բարբառներից միակը, որ դարձավ գրական լեզու և մեզ հասավ բազմաթիվ վկայություններով, իսկ մյուսները կորսվեցին: Կիլիկյան հայերենը միջին հայերենի միակ գրական տարբերակ ընդունելու դեմ է Դ. Կուսիկյանը: Նա գտնում է, որ այդ ժամանակաշրջանում Կենտրոնական Հայաստանում տեղի էր ունենում գրական նոր լեզվի ստեղծման նույնպիսի պրոցես, ինչ որ Կիլիկիայում, այնպես որ 12-րդ դարում «գոյակցում էին մեռած գրաբարը և միջին հայերենի երկու հոսանք», «գրաբարը մի տեսակ կապող սուբստրատ էր, որ պահպանում էր հայոց լեզվի համաժողովրդական հատկանիշները և զարգացման ընդհանուր տեղեկները»: Միջին հայերենի միասնական և համաժողովրդական բնույթ ունենալու տեսակետն է պաշտպանում Ս. Ղազարյանը: Հակադրվելով մի կողմից Կարստին, որը գտնում էր, թե միջին հայերենը նույն կիլիկյան հայերենն է, մյուս կողմից Աճառյանին, որը կիլիկեցիները համարում էր միջին հայերենի միակ գրական տարբերակը, նա արտահայտում է մի նոր տեսակետ, որի համաձայն միջին գրական հայերենը զարգացել է ոչ թե որևէ բարբառի (ոչ նույնիսկ կիլիկյան) հիման վրա, այլ բոլոր բարբառներից ընդունել է ամբողջ հայ ժողովրդին հասկանալի ընդհանուր իրողությունները: Նրա կարծիքով, չեն եղել նաև միջին հայերենի՝ տարբեր բարբառային հիմքեր ունեցող գրական տարբերակներ, այլ կար մեկ միասնական գրական միջին հայերեն, որի հիմքն էր ժամանակի համաժողովրդական խոսակցական լեզուն: Միջին հայերենի տեղային տարբերակների հարցին անդրադարձել է նաև Մ. Մուրադյանը, որն առանձնացնում է չորս տարբերակ՝ 1) Կիլիկիայի, 2) Երզնկայի, 3) Արևելյան կուր ճյուղի և 4) Արևելյան լ ճյուղի: Բերվում են հետաքրքրական փաստեր, բայց որոշ հարցեր մնում են դեռ լուծելի, մասնավորապես, արդյո՞ք բերված տարբերությունները բավարար են որոշակիորեն նշված տարբերակներն առանձնացնելու համար և արդյո՞ք նշվածները գրական լեզվի տարածական տարբերակներ են, թե բարբառներ: Այստեղից բխում է և մեկ այլ հարց՝ գրական լեզվի ու բարբառների փոխհարաբերության և այդ շրջանակում գրական լեզվի բարբառային հիմքի որոշման հարցը, որը նույնպես մինչև օրս տարակարծությունների տեղիք է տալիս: Արտահայտված կարծիքները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. 1) միջին հայերենը ձևավորվել է գրաբարից տարբեր՝ դեռևս հին հայերենի շրջանում գրաբարի բարբառային հիմքի կողքին միաժամանակ գոյություն ունեցած մի այլ բարբառի հիման վրա (Այտընյան), 2) միջին հայերենը ձևավորվել է Կիլիկիայում, տեղի խոսակցական լեզվի հիման վրա, բարձրացել է գրականության աստիճանի և որպես պետական լեզու ուժեղ կերպով ազդել է նաև Հայաստանի այլ գավառների լեզվի վրա (3. Կարստ,

3. Աճառյան), 3) միջին հայերենը զարգացել է երկու (կամ ավելի) տարբեր բարբառների հիմքերի վրա Կիլիկիայում և Կենտրոնական Հայաստանում, իսկ գրաբարը հանդես է եկել որպես այդ երկուսի միջև կապող օղակ (Յ. Կուսիկյան, Ս. Մուրադյան), 4) միջին հայերենը զարգացել և գրական աստիճանի է բարձրացել ոչ թե մեկ առանձին բարբառի, այլ համաժողովրդական խոսակցական լեզվի հիման վրա, որն արդյունք էր միջնադարյան Հայաստանի քաղաքներում տեղի ունեցող բարբառների «կոնսոլիդացիայի» (Ս. Ղազարյան): Կան նաև այլ տեսակետներ, որոնք մասնակի տարբերություններով մոտենում են վերը նշված այս կամ այն կարծիքին: Պետք է ավելացնել նաև, որ մինչև օրս կարևոր խնդիր է մնում գրական լեզվի տարածքային (ռեգիոնալ) տարբերակների և բուն բարբառների, որպես խոսակցական տարբերակների սահմանազատման հարցը:

Յետազոտողներն անդրադարձել են նաև միջին գրական հայերենի մշակման ու նորմավորման խնդիրներին, նշելով, որ թեև սկզբնական շրջանում լեզուն ցուցաբերում էր միասնականացման և կանոնարկման որոշ միտումներ, սակայն պատմական համագամայնների բերումով այնպես էլ չկարողացավ հասնել գրական մշակման ու նորմավորման այն աստիճանին, որը հատուկ է եղել գրաբարին: Միջին հայերենյան շրջանում առկա էր բավական բարդ լեզվական իրադրություն: Նոր ձևավորված գրական միջին հայերենի կողքին շարունակում էր որպես գրական լեզու կիրառվել և գրաբարը, այնպես որ միջնադարյան հայ մատենագրության մեջ կարելի է առանձնացնել և մաքուր գրաբար բնագրեր, և խառն միջին հայերենով ու գրաբարով գրված երկեր, և միայն միջին հայերեն բնագրեր: Միջին հայերենով գրող հեղինակները առավել կամ պակաս չափով գտնվել են գրաբարի ազդեցության տակ, թեև կարելի է ասել, որ երկու գրական լեզուների միջև գոյություն ուներ կիրառման բնագավառների և գրական ժանրերի բավական որոշակի ուրվագծվող բաժանում: Այսպես, գրաբարը մնում էր որպես դպրոցական կրթության և եկեղեցական արարողությունների լեզու, գրաբարով էին գրվում պատմական, փիլիսոփայական, քերականագիտական աշխատությունները, եկեղեցական ծիսական և դավանաբանական գրականությունը, հոգևոր առաջնորդների շրջաբերականներն ու թղթերը: Միջին հայերենով գրվում էին գեղարվեստական գրականությունը, օրենսգրքերը, բժշկությանը, դեղագործությանը, անասնապահությանը, երկրագործությանը վերաբերող գրքերը, Կիլիկյան Հայկական պետության մեջ արքունի հրովարտակները, արտոնագրերը, դիվանագիտական փաստաթղթերը: Այս անջրպետումը, սակայն, միշտ չէ, որ հետևողական և բացարձակ բնույթ ուներ: Հեղինակները հաճախ այդ երկու լեզուները կիրառում էին խառն՝ կախված գրաբարի իրենց իմացությունից, տվյալ երկի նպատակադրումից, հեղինակի զգացմունքային վերաբերմունքից, նրա բարբառային պատկանելությունից, որ կամա թե ակամա արտահայտություն էր գտնում գրավոր լեզվում: Այնպես որ միջին հայերենի շրջանի համար խիստ բնորոշ է լեզվական տարբեր համակարգերի փոխներթափանցումը, տարբեր ծագում ունեցող ձևերի զուգահեռ կիրառությունը միևնույն բնագրում: Այս համագամայնքը հետազոտողների առաջ խնդիր է դնում առավել ճշգրիտ բնութագրել և զնահատել միջին հայերենի լեզվական աղբյուրները՝ նրանց մեջ հին և նոր գրական հայերենների, ինչպես նաև ժամանակի բարբառային տարբերակների լեզվական նյութի սահմանազատման տեսակետից: Այդպիսի մանրամասն ուսումնասիրություններ կատարելու համար անհրաժեշտ է ունենալ միջնադարյան մատենագրական հուշարձանների հաշվառում, աղբյուրագիտական և ձեռագրագիտական նկարագրություն, քննական բնագրերի հրատարակում: Պետք է ասել, որ հայ դասական և ժամանակակից բանասիրությունը այդ ասպարեզում բավական նշանակալից աշխատանք է կատարել, սակայն նոր ժամանակների պահանջները թելադրում են կիրառել հետազոտական նոր սկզբունքներ ու մեթոդներ, մասնավորապես պետք է նշել ինֆորմա-

ցիոն տեխնոլոգիաների կիրառումը, որը հնարավորություն կտա ավելի մանրակրկիտ ու խորությամբ ուսումնասիրել հայ միջնադարյան մատենագրությունը և առանձնապես այն գրավոր հուշարձանները, որոնք ունեն հավաստի թվագրություն: Հայտնի է, որ այդպիսի հուշարձանների թվին են պատկանում վիմագիր արձանագրությունները, ձեռագրերի հիշատակարանները, վավերաթղթերը, արտոնագրերը, արքունի հրովարտակները և այլն: Դրանց հավաքումը և էլեկտրոնային մշակումը մեծապես նպաստելու է հայոց լեզվի պատմության և առանձնապես միջին հայերենի հետ կապված հարցերի նոր լուսաբանմանը: Դրա համար վերջին տասնամյակներում որոշակի նախադրյալներ են ստեղծվել: Համակարգիչ է ներմուծվել հայ հին և միջնադարյան մատենագրության հուշարձանների զգալի մասը, մասնավորապես, տպագիր և ձեռագիր աղբյուրների հիման վրա կազմվել է V-XVIII դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների համակարգչային շտեմարան, և որոշակի ծրագրերի օգնությամբ հնարավոր կլինի տեղայնացնել լեզվական հատկանիշները և որոշել նրանց առաջացման ժամանակը:

Այսպիսով, եթե մի կողմից կատարվել է զգալի աշխատանք և ձեռք են բերվել ընդհանուր ընդունելություն գտած արդյունքներ միջին հայերենի հետազոտության որոշ բնագավառներում, հատկապես նրա ժամանակագրական սահմանների որոշման, զարգացման փուլերի առանձնացման, գրական մշակման ընթացքի, գրաբարի և միջին հայերենի որպես գրական լեզուների գոյակցման հարցերում, ինչպես նաև միջին հայերենի քերականական կառուցվածքի նկարագրության, առանձին քերականական ձևերի ծագման, այդ փուլում լեզվի կրած կառուցվածքային և տիպաբանական փոփոխությունների պարզաբանման ուղղությամբ, ապա մյուս կողմից դեռևս լուծելի խնդիրներ կան միջին հայերենի բարբառային տարբերակվածության, գրական լեզվի բարբառային հիմքի, միջին հայերենում նախագրաբարյան հնաբանությունների հայտնաբերման, սկզբնաղբյուրների լեզվի զննհատման, գրաբարից միջին հայերեն և միջին հայերենից աշխարհաբար անցման, միջին հայերենի և աշխարհաբարի փոխհարաբերության, ժամանակակից բարբառների հետ նրա հնարավոր կապերի հաստատման և այլ բնագավառներում: Այդ խնդիրների լուծման համար մշակվել են տեսական և մեթոդական հիմքեր, սկիզբ է դրված ստեղծելու լեզվական նյութի համակարգչային շտեմարան և ծրագրեր, որոնց օգնությամբ կարելի է ի մի բերել և ավելի հավաստիորեն ներկայացնել հայոց լեզվի պատմական զարգացման հետաքրքրական հարցերով հարուստ այդ ժամանակաշրջանը:

#### **Գրականություն**

1. Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Երևան, 1960:
2. Ռ. Ղազարյան, 3. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, 1-2, Երևան, 1987-1992:
3. Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 110:
4. 3. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 234:
5. J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg, 1901, S. 4.